կրօնի, թուրք մշակոյթի, ապրելակերպի ու սովորութիւնների երկարամեայ ազդեցութիւնը չէին կարողացել Հերանուշ/Սեհերի եւ իր նմանների մէջ ամբողջովին ջնջել ազգային ինքնութիւնը, որ այնուամենայնիւ, աստիճանաբար նոր տարրեր էր ընդունել, զիջումներ էր կատարել ու մի նոր տեսակի հայկականութեան էր յանգել: Այդ հայկականութիւնը պիտի կայծկլտար Ֆեթիհէ Չեթինի մէջ ու մղէր նրան իր ինքնութեան մէջ այդ տարօրինակ տարրը փնտռելու, Ամերիկայում գտնելու իր տատի ընտանիքի մնացորդացին:

Որպէս բանուոր Գերմանիա եկած Հաճը Իպրահիմն էլ հիմա այնքան խիստ էր ցանկանում իր ինքնութիւնը յայտնել բոլորին ու «կոկորդս պատռելու աստիճան ''ես Հայ եմ'' պոռալ». բայց Թուրքիա մնացած ընտանիքները իրեն եւ իր նմաններին յանձնարարել էին՝ «ամուր բռնեցէ՛ք ձեր բերանները: Այստեղ մեզ փորձանքի մի՛ մատնէք»: Սուլթանն էլ, դարձեալ մի բանուոր Գերմանիայում, հոգու խաղաղութեան էր ձգտում, «Ես այլեւս անդորրութիւն կ՚ուզեմ, ''դարձած'', ''կեավուր'' պիտակներով նախատուիլ, այլեւս չհաւատալով հանդերձ իսլամ ձեւացնել չեմ ուզեր... Ո՛չ Գերմանիոյ, ո՛չ ալ Ատըեամանի մէջ կ՚ուզեմ թաքցնել հայութիւնս»:

Թուրքիայում ապրող հայը ապրել ու ապրում է խտրականութեան ու հալածանքի պայմաններում, առանց բարելաւման հեռանկարի: Իրար յաջորդող իշխանութիւնների քաղաքականութիւնը ընդդէմ երկրի փոքրամասնութիւնների շարունակուել եւ շեշտուած դրսեւորումներ է գտել 1934-ի ոչ-թրքական ազգանունների արգիլման, 1942-ի ոչ-մահմեդականների վրայ դրուած հարստութեան տուրքի -- որ ներառեց իսլամ հայերին եւս -- 1955-ի յոյների